

**ԻՆՏԵՐՆԵՏԻ ՄԻՋՈՑՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՐԿՄԱՆ
ՎԵՐԱՅՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄԵՐԸ**

Ինչպիսին էլ լինի ինտերնետի տարածման ներկայիս մակարդակը, հաստատված իրողությունն է, որ այն անվիճելի կարևոր դերակատարում ունի ժամանակակից տնտեսական կյանքում: Ամբողջ աշխարհում ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործունեությունը ամուր դիրքեր ունի տնտեսական գործունեության այլ տեսակների համատեքստում, իսկ Հայաստանում օր օրի աճում են այն ընկերությունների շարքերը, որոնք ոչ միայն ձեռնարկատիրության վարման ավանդական եղանակներին զուգահեռ գործունեություն են ծավալում ինտերնետում, այլև այնպիսիք, որոնք իրենց գործունեությունը մեծամասամբ կամ ամբողջությամբ ծավալում են ինտերնետ միջավայրում:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործունեության հարկման հիմնախնդիրներն արդեն մեկ և կես տասնամյակ ակտիվ քննարկումների փուլերում են: Չարգացած երկրներում քննարկումների հիմնական առարկան այն է, որ հաճախ էլեկտրոնային գործարքի մասնակիցները տարբեր երկրներից են, և երբեմն անհնար է լինում պարզել գործարքի մասնակիցների աշխարհագրական պատկանելիությունը կամ ինքնությունը, ինչը թույլ չի տալիս հարկային մարմիններին տնտեսական գործունեության նկատմամբ կիրառել արդյունավետ հարկային վարչարարություն: Դրան մայաստում է մասն առնել հանգամանքը, որ վաճառված ապրանքը կարող է լինել ոչ նյութական, և դրա՝ մաքսային սահմանը հատելու փաստը և ըստ այդմ հսկողություն իրականացնելը նույնպես խիստ դժվար է: Դեռ ավելին, գոյություն չունի հստակ մեխանիզմ որևէ համակարգչային ծրագրի և էլեկտրոնային տեսքով ներկայացվող ապրանքի մաքսային արժեքի որոշման համար: Համակարգչային ծրագրի արժեքը հարյուրավոր, նույնիսկ հազարավոր անգամներ կարող է գերազանցել նյութական կրիչի, օրինակ՝ լազերային սկավառակի արժեքը:

Հայաստանում ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկման հիմնախնդիրը դեռևս այնքան սուր չէ, ինչը, ենթադրաբար, կապված է գործունեության այս տեսակի փոքր ծավալների հետ: Սակայն կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայ իրականության մեջ օրեցօր ավելանում է ինտերնետի միջոցով իրականացվող նախագծերի թիվը, ինչն ի վերջո հանգեցնելու է գործունեության այս տեսակի հարկային վերահսկողության կազմակերպման հիմնախնդրին:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործունեության հարկային վերահսկողության արդյունավետության բարձրացման գործողությունները պետք է առաջնահերթ ուղղված լինեն ինտերնետի միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների պետական գրանցման և հարկային հաշվառման կանգնելու գործող համակարգի կատարելագործմանը, ինչպես նաև ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից թաքցված իրական հարկային բազայի որոշման համակարգի մշակմանը:

Ինտերնետի միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունների պետական գրանցման և հարկային հաշվառման կանգնելու գործող համակարգը հնարավորություն է տալիս շրջանցել հարկերի վճարումը, այսինքն՝ արհեստականորեն այնպիսի պայմաններ ստեղծել, որոնց դեպքում կազմակերպությունները հարկատուներ չեն: Հարկման շրջանցման ամենատարածված մեթոդներից է կազմակերպությունների կողմից պետական գրանցման վկայական ստանալու պարտականություններից զիտակցված հրաժարվելը և, որպես հետևանք, հարկային հաշվառման կանգնելուց խուսափելը: Այդ դեպքում կազմակերպությունները փաստորեն գրանցված հարկատուներ չեն, հետևաբար չեն վճարում

օրենքով սահմանված բոլոր հարկերը: Չնայած հարկային մարմիններում գրանցումից խուսափելը, և ընդհանրապես առանց պետական գրանցման ձեռնարկատիրական գործունեությանը զբաղվելը անօրինական է, բազմաթիվ ինտերնետ կազմակերպություններ կարող են դիմել նման քայլի, քանի որ դրա բացահայտման հավանականությունը չափազանց ցածր է:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի դեպքում հասանելի և կազմակերպության ներկայացվածության միակ երևույթը գործունեության իրականացման ինտերնետային հասցեն է: Հետևաբար, որևէ հարկային և վարչական ցանկացած այլ վերահսկողության արմատները պետք է փնտրել կայքերի ինտերնետային հասցեների գրանցման և վարման համակարգերում: Այսինքն, հարկային վերահսկողության մեթոդաբանության մշակման համար անհրաժեշտ է ուսումնասիրել ձեռնարկատիրական կայքերի գրանցման գոյություն ունեցող կարգը, ինչը որը թույլ կտա էլեկտրոնային ձևով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպություններին հարկային հաշվառման կանգնեցնել:

Ինտերնետում յուրաքանչյուր անուն՝ դոմեն անուն, եզակի է և ունի իր սեփականատերը: Հայաստանում «.am» դոմենային գոտու կառավարման իրավասությունը պատկանում է «Հայաստանի ցանցային տեղեկատվական կենտրոն» հասարակական կազմակերպությանը¹:

Հայաստանում ինտերնետ ցանցում ձեռնարկատիրական գործունեություն վարելու համար ստեղծվող կայքի համար նախատեսված դոմեն անվան գրանցման գործընթացը ոչ մի բանով չի տարբերվում ցանկացած այլ տեսակի կայքի համար նախատեսված դոմեն անվան գրանցումից: Գործող կարգին համապատասխան՝ գրանցողը պետք է տրամադրի անձը հաստատող և կոնտակտային տեղեկատվություն: Ֆիզիկական անձանց համար՝ անուն, բնակության վայր, անձը հաստատող փաստաթղթի մասին տվյալներ և էլեկտրոնային փոստի հասցե: Իրավաբանական անձի համար՝ կազմակերպության լրիվ անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման մասին տվյալներ, ինչպես նաև կոնտակտային հեռախոսներ և էլեկտրոնային փոստի հասցեներ: Սակայն դոմեն անուն գրանցելու համար դիմումի լրացման ժամանակ ներկայացվող տեղեկատվության իսկությունը հաստատող կամ այլ փաստաթղթերի տրամադրումը այս դեպքում պարտադիր չէ, և գործնականում կայքի տիրոջ նույնականացման հնարավորություն երաշխավորով տվյալները, հնարավոր է, գրանցման ժամանակ չներկայացվեն:

Հարկային վարչարարության արդյունավետ համակարգի ներդրման նպատակով առաջարկում ենք հետևյալ բարեփոխումները.

- դոմեն անվան գրանցման ժամանակ գրանցողի անձի տրամադրած վավերապայմանների ստուգման համակարգի ներդրում,
- գրանցվող դոմեն անունը ձեռնարկատիրական օգտագործման, այդ թվում գովազդի վճարովի տեղադրման նպատակով օգտագործելու մտադրության առկայության դեպքում այդ հանգամանքի ծանուցման համակարգի ներդրում,
- ձեռնարկատիրական նպատակով դոմեն անուն գրանցելիս ձեռնարկատիրական գործունեության պետական գրանցման վկայագրի վավերապայմանների, ինչպես նաև հարկ վճարողի հարկային համարի պարտադիր տրամադրում և ռեգիստրում գրանցում,
- հարկային մարմիններում դոմեն անվան՝ որպես ձեռնարկատիրական գործունեության իրականացման «վիրտուալ» վայրի գրանցում:

Նման համակարգի առկայության դեպքում ինտերնետի միջոցով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող բոլոր անձինք նույնականացվում են, իսկ անօրինական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելը զգալիորեն բարդանում է:

Այսպիսով՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեում կձևավորվի այն կազմակերպությունների միասնական ռեեստրը, որոնք հնարավորություն ունեն ինտերնետի միջոցով իրականացնել առևտրային ձեռնարկատիրական գործունեություն կամ արդեն իսկ փաստացի իրականացնում են նման գործունեություն: Միաժամանակ տարբեր իրավական կարգավիճակներ ունեցող անձանց ձեռնարկատիրական գործունեության չիրականացման նպատակով

¹ www.amnic.net/

գրանցված դոմեն անունների վրա, կամ այլ երկրների գոտիներում գրանցված, սակայն հարկային մարմիններում չգրանցված դոմեն անունների վրա տեղակայված կայքերի միջոցով ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեության իրականացումը պետք է հավասարեցվի անօրինական ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու իրավական կարգավիճակի հետ՝ դրանից բխող բոլոր հետևանքներով:

Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպությունների կողմից թաքցված իրական հարկային բազայի որոշման համակարգի մշակումը հարկային վերահսկողության կատարելագործման ամենաբարդ խնդիրն է: Ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի դեպքում ապրանքի համար կարելի է վճարել էլեկտրոնային փողերի համակարգով, ինչպես նաև մի շարք այլ մեթոդներով, որոնք շրջանցում են բանկային հաշիվը և չեն կարող վերահսկվել հարկային մարմինների կողմից, կարելի է ենթադրել, որ այս մեթոդն անարդյունավետ է:

Գրականությունում առկա են հարկման բազայի հաշվարկման անուղղակի բազմաթիվ մեխանիզմների նկարագրություններ: Նման անուղղակի հաշվարկների հիմքում կարող են դիտվել բազմաթիվ գործոններ, որոնց թվում են.

- կայքը սպասարկող սերվերի կողմից փոխանցված տեղեկատվության ծավալը,
- իրացվող թվային ապրանքների և ծառայությունների տեսականին,
- յուրաքանչյուր առանձնացված խմբում ներառված իրացվող թվային ապրանքի միջին ծավալը,
- «ցիտման ինդեքսը», այսինքն՝ փնտրման համակարգերում կայքի վարկանիշը,
- որոշակի ժամանակահատվածում առևտրային կայքի հաճախորդների թիվը,
- առևտրային կայքում տեղադրված գովազդային վահանակների ընդհանուր մակերեսը, քանակը և այլն:

Եթե փորձենք գնահատել, թե առաջարկվող ցուցանիշներից, որը կարող է գործնական կիրառություն գտնել իրական կյանքում, հեշտությամբ կարելի է համոզվել, որ դրանցից և ոչ մեկը գնահատման վստահելի գործիք չէ: Միաժամանակ, հարկային մարմինների կողմից վարչական վարույթներում անուղղակի գնահատման ցուցանիշների կիրառման դեպքում տնտեսվարողները կարող են դատական կարգով բողոքարկել դրանք, և ամենայն հավանականությամբ դատական ատյանները անուղղակի գնահատման արդյունքները հավաստի չեն համարի: Բացի այդ, այս մեթոդաբանությունն իր մեջ կոռուպցիոն ռիսկի տարրեր ունի, քանի որ գնահատման գործընթացը փոխկապակցված է սուբյեկտիվիզմի հետ: Վերջիվերջո, հարկային նման վարչարարության ներդրումը անհավասար պայմաններ կստեղծի ձեռնարկատիրության ավանդական և ինտերնետի միջոցով իրականացվող տարատեսակների միջև, ինչը տնտեսական քաղաքականության տեսանկյունից անընդունելի է:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ չնայած անուղղակի մեթոդներով հնարավոր է կարծիք կազմել իրական շրջանառության մեծության մասին, այնուամենայնիվ նման մեթոդների կիրառումը ստույգ տեղեկատվություն չի կարող ապահովել: Նման գնահատման հիման վրա կարելի է առաջարկել միայն հաստատագրված վճարների համակարգ, ինչը, մեր կարծիքով, ընդունելի չէ: Ինտերնետի միջոցով առևտրային գործունեություն իրականացնող ձեռնարկությունների կողմից հարկման բազայի թաքցնելու դեմ պայքարի ամենագործուն մեխանիզմները պետք է հիմնվեն իրականացված առևտրային գործարքների թաքցնելը բացառող համակարգերի վրա, իսկ գործարքը թաքցնելու փաստը պետք է արձանագրվի հսկիչ գնումների վրա: Միաժամանակ, վերը նկարագրված համակարգը կարող է միայն մատնանշել այն «ռիսկային» կայքերը, որոնց միջոցով ստացված եկամուտները քողարկվում են հարկային մարմինների կողմից, հետևաբար, հսկիչ գնումների տեղիք են տալիս: Մասնավորապես, եթե համանման հաճախելությամբ և ապրանքներ վաճառող կայքերը հարկային մարմիններ ներկայացվող հաշվետվություններում էական տարբերություններով շրջանառության ցուցա-

նիշներ են ներկայացնում, դրանով իսկ հիմք է ստեղծվում պակաս ցուցանիշներ ներկայացրած կայքում հսկիչ գնում կատարելու համար:

Գործնականում կիրառելի մեթոդաբանությունը պետք է հիմնված լինի այնպիսի սկզբունքների վրա, որպեսզի հնարավորություն ընձեռի իրականացնել արդյունավետ հարկային վերահսկողություն՝ հաշվի առնելով ինտերնետի միջոցով իրականացվող առևտրային գործունեության այնպիսի բնորոշ գծերը, ինչպիսիք են էլեկտրոնային փողերով վճարումների կատարման հնարավորությունը, ապրանքի ոչ նյութական բնույթը և դրա ֆիզիկական տեղաշարժի վերահսկելիությունը, անանուն գնումների հնարավորությունը, գլոբալ բնույթը և այլն: Որպես նման գործիք առաջարկում ենք կիրառել «ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի հարկային հսկման համակարգը», որը սկզբունքորեն համարժեք է առևտրի ավանդական ձևերում կիրառվող հսկիչ դրամարկղային մեքենաներին:

Նման հսկման համակարգի գործունեությունը պետք է հիմնվի պետական եկամուտների կոմիտեի կողմից ստեղծված էլեկտրոնային համակարգի վրա: Վերը նկարագրված դոմեն անունների գրանցման մեխանիզմով կազմակերպությունները հարկային մարմիններում դոմեն անունը որպես գործունեության «վիրտուալ» վայր գրանցելիս ստանում են պետական եկամուտների կոմիտեի կողմից ստեղծված էլեկտրոնային համակարգի հետ աշխատելու ուղեցույց: Միաժամանակ ՊԵԿ-ի պաշտոնական կայքում բացվում է անհատական էջ, որտեղ կայքի միջոցով իրականացված ցանկացած առևտրային գործարքից անմիջապես հետո վաճառողը պարտավոր է մուտքագրել առևտրային գործարքի նույնականացման համարը (որը պետք է նաև պարտադիր տրամադրվի գնորդին) և գործարքի գումարը: Փաստորեն նման համակարգի միջոցով միանգամից լուծվում է ինտերնետի միջոցով իրականացվող առևտրի մինչ այժմ չլուծված էլեկտրոնային փողերով վճարային համակարգերի խնդիրը: Վաճառողը անկախ գումարի գանձման, ապրանքի առաքման եղանակներից, ապրանքի նյութական կամ ոչ նյութական բնույթից պարտավոր է գործարքից հետո սահմանված ժամանակամիջոցի ընթացքում նշում կատարել ՊԵԿ-ի կայքում ստեղծված իր անհատական էջում: Ընդ որում ՊԵԿ-ի կողմից ստեղծված համակարգը պետք է հնարավորություն տա իրականացված գործարքների մասին պահանջվող տվյալները ոչ միայն «ձեռքով» (այսինքն՝ անհատի կողմից), այլև ավտոմատ համակարգերի միջոցով գրանցել ՊԵԿ-ի համակարգում, ինչը հնարավորություն կտա մեծ թվով գործարքներ ունեցող առևտրային կազմակերպություններում ներդնել սեփական կայքի և ՊԵԿ ստեղծած համակարգի ավտոմատ փոխգործակցության մեխանիզմներ: